№ 72 ԵՐԿՇԱԲԹԻ 1883 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Հրատարակումն շաբաթը երեք անգամ:

Խմբագրատունը բացէ 2—5 ժամը կէս օրից յետոյ:

ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարեկան բաժանորդագինն է Երևանում 1 րուբ.

Յայտարարութիւնները ընդունւում են հայերէն, ռուսերէն և Թուրքերէն լեզուներով:

Յայտարարութիւնների համար վճարւում է իւրաքանչիւր բառին 2 կոպ. — մի անգամ, 3 կոպ. — երկու անգամ իսկ մնացած անդամների համար պիտի աւելացնել կէս կէս կոպէկ:

Խմբագրատունը գտնւում է Երևանում, Աստաֆեան և Ռէհբոթեան փողոցների անկիւնում, նմին տէր Գրիգորեանցի տարածանում:

Լ Ր Ե Ր

Երևանայ գաւառի, Արմիկու հաստատութեան, Վարաղայուղու գիւղում ամսոյս 22-ին առաւօտեան ժամի 9-ին երկու անդամ խիստ երկրաշարժ եղաւ: Լսելի էր գետնի տակից սաստիկ որոտումն: Մի քանի ակնթարթում այդ շարժը որոտմունքով հասել է միւս գիւղերը, որ մինչև 10-15 վերստ հեռաւորութիւն ունին այդ տեղից: Գիւղերի շինութեանը և մարդիկներին վնաս չէ հասած: Երկրորդ շարժը սկսուել է հինգ րոպէից յետոյ: Այդ տեղը Երևանից մինչև 45 վերստ հեռաւորութիւն ունի և գտնւում է քաղաքիս արևելեան կողմի լեռներում: Ինչպէս պատմւում են, մօտ 500 տարի սորանից առաջ, այնտեղում գըտնուած մի հայոց եկեղեցի նոյնպէս սաստիկ շարժից աւերակ է դարձած, որոյ փլատակները ներկայումս էլ կան:

—

Մօտ օրերումս, Գարսկաստանից մի կարաւան, անցնելով Աբարանի ճանապարհով, կամենում էր Տփխիս գնալ: Այդ ճանապարհին կարաւանի վերայ յարձակվում է մի ասպատակաց խումբ, վից հոգուց կազմուած, որը հետևակորդներից մէկին սպանում է և, խլելով երկու ձի և 610 ր. փող՝ անյայտանում է: Ասպատակներին կալանաւորելու համար որդէն կարգադրութիւն է արած:

—

Տեղւոյն գիշերուայ տաքութիւնը հասնում է 1 աստիճանի:

—

Նորին Բարձր Սրբազնութիւն Մատթէոս Սրբազնագոյնը Շաբաթ, Հոկտեմբերի 29-ին ժամի 4-ին երեկոյեան հասաւ Երևան և նոյն օրը ուղևորվեց ս. Էջմիածին:

—

Գուրս եկաւ ԱՐԱՐԱՏԻ 10-րդ համարը, որոյ մէջ գտնում ենք մեր ազգային ուսումնարանների մի ծրագիր: Ս. Էջմիածնայ Ճեմարանի Ռուսական ժողովը յառաջարանի մէջ առաջարկում է հայ հասարակութեան քննադատութեանը իւր կազմած այդ ծրագիրը: „Մեր ցանկութիւնն է եղել, գրում է ժողովը, ուսումնարանների ծրագիրը այնպէս կազմել, որ մի դպրոցից միւսը՝ բարձրը մանողը այն անյարմարութիւնները չունենայ, ինչ որ մենք ամեն քայլափոխում հանդիպում ենք: Մեր ծրագիրը կարող է փոփոխութիւն-ներով ենթարկուել և այդ կողմից մենք ամենայն շնորհակալութեամբ կլանենք ազգային բոլոր ուսումնարանաց մանկավարժական խորհուրդների և փորձառու անձանց դիտողութիւնները, բայց մի բան ցանկալի պէտք է լինի, որ մեր զանազան կարգի ուսումնարանները իրեարից ծրագրով իրարու հետ սերտ կապուած լինին":

Խմբագրութիւնս իւր կողմից պարտք է համարում հրատիրել հայ հասարակութեան այն մասի ուշադրութիւնը և մասնակցութիւնը, որ կարող է նպաստել այդ գործի վաղուց-վանից ցանկալի գործին: Ամեն մի խոհական կարծիք, խորհուրդ, դիտողութիւն և քննադատութիւն մեծ օգուտ և նշանակութիւն կարող է ունենալ և մենք աներկիւղ ենք, որ յարգելի ժողովի այդ առաջարկութիւնը, գոնէ այս անգամ, արձագանգ պէտք է գտնի մերայիններն մէջ և ոչ թէ այսօր, վաղը գիրքով ձեռքն ասնուշտիր կհանդիսանան և այդ դէպքում, թէ՛ և մեր, հայերիս, գլխաւոր յատկութիւններից մէկն էլ այդ է:

Գործի մեծ մասը կատարուած է:

Փ Ո Շ Տ Ա Ր Կ Ղ

Երևան նեբլագր ներկը պակասել է.—ինչու չես ներկում:

— Բայաճէ. երեքը կըտպագրուեն:

ՕԴԱՑՈՑ

23 ին ՀՈԿՏԵՄԲԵՐ		
Առաւօտ	կէս օր	երեկոյ
անձրևային		
Բէօմիւրի չերմաչափով		
†6	†12	10
24 ին ՀՈԿՏԵՄԲԵՐԻ		
Առաւօտ	կէս օր	երեկոյ
ամպային և անձրևեայինն		
Բէօմիւրի չերմաչափով		
†7	†10	†9
25, 26 և 27 ին ՀՈԿՏԵՄԲԵՐԻ		
Առաւօտ	կէս օր	երեկոյ
ամպային		
Բէօմիւրի չերմաչափով		
4	13	9

ՅԱԿՈՒ ՄԵՀԵՐԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ

Նոյեմբերի մէկից բացինք ԿՕՄԻՍԻՕՆԵՐԱԿԱՆ գրասենեակներ Երևանում և Ազատաֆի երկաթուղու կայարանում ապրանքների տեղափոխութեան և ամեն տեսակ յանձնարարութիւնների համար: Ապրանքներ կը տեղափոխուին Ազատաֆի երկաթուղու կայարանից դէպի ամեն քաղաքներ՝ վերցնելով ՓՐԹԻՑ ԵՐԿՈՒ կօպ. կօմիսեայ, իսկ Երևանից և միւս տեղերից երկաթուղուն յանձնելու համար՝ ՓԹԻՆ ՄԷԿ ԿՕՊ.

Հասցէներ. Акстафа, Томасу Мегерянцъ,
Эривань, Бакрату Мегерянцъ.

АГЕНТСТВО

С-Петербургской Компаніи
„НАДЕЖДА“
въ г. Эривани
Открыто 15 Октября 1883 г.
КОНТОРА
на Базарной площади въ домѣ Татевосова
Агентъ:
Василій Никифоровичъ Ельмановъ.

„ՆԱԴԵԺԴԱ“

Ս-Պետերբուրգի ընկերութեան
գործակալութիւնը
Երևանում
բացուած է 15-ից Հոկտեմբերի 1883 թուի.
կանոնաւոր
գանվում է Բազարնայա հրապարակում Թադէոսեանի
տանը:
Գործակալ Վասիլեյ Նիկիֆորովիչ Ելմանով:

Վաճառվում է Երևան քաղաքում Դէյստվիտէլնիյ Սոտատսկիյ Սովէտնիկ Մելիք Ազամալեանցի հետևեալ կայքը:

1. Տունը, որտեղ կինում է ինքը պ. Մելիք Ազամալեանցը, և տան առաջի այգին:
2. Տունը, ուր տեղաւորված է գանձարանը (Казначейство).
3. Այգին, որը գանվում է գալմայում:

Գների համար հարցնել նոյն իսկ տիրոջից:

ИЗВѢЩЕНІЕ

На дняхъ прибыла всемірно извѣстная престидижитаторша г-жа Изабелла и будетъ имѣть честь дать двѣ экстренныхъ антиспиритическое и магическ. представленій, которыя были даваемы ею въ Москвѣ во время празднествъ священнаго коронованія ИХЪ ИМПЕРАТОРСКИХЪ ВЕЛИЧЕСТВЪ въ народномъ театрѣ. О днѣ представленія и программа объявлено особыми афишами.

ПРОДАЕТСЯ

Четырехъ мѣстная поддержанная Вѣнская коляска по сходной цѣнѣ.

Спросить на слободкѣ у Петра Самодурова.

ЧАСТНАЯ ШКОЛА

П. А. Шагума
Объявляетъ,
что преподаваніе Русскаго и туземныхъ языковъ будетъ въ продолженіе всего академическаго года. Шагумъ.

Գ. Ա. ՇԱԳՈՒՄԻ

Մասնաւոր ուսուցիչը
յայտնում է,
որ Ռուսաց և տեղական լեզուները ստանձնվում են ամբողջ ուսումնական տարին անընդհատ:
Շագում:

НАСТОЯЩІЯ ШВЕЙНЫЯ МАШИНЫ
КОМПАНІИ ЗИНГЕРЪ
ВЪ НЬЮ-ІОРКѢ.

Повѣренный Американской компаніи **ЗИНГЕРЪ** симъ доводитъ до свѣдѣнія почтеннѣйшей публики, что желающіе пріобрѣсти **ШВЕЙНЫЯ МАШИНЫ** для домашняго быта и ремесленниковъ, могутъ обратиться по случаю выѣзда отъ сего числа по 10-го Ноября.

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ
ԶԻՆԳԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՆԻՒ-ԻՕՐԿՈՒՄ:

Ամերիկական Զինկեր ընկերութեան հաւատարմատարը, կամենալով Երևանից հեռանալ այսու յայտնում է յարգելի հասարակութեանը, որ ով ոք ցանկանում է ունենալ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ինչպէս անձային գործածութեան նոյնպէս և արհեստանոցների համար, կարող են դիմել այս օրերից մինչև Նոյեմբերի 10ը:

Խմբագիր—Հրատարակիչ ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:

Дозволенцензоурою 1 Ноября 1883 года. гор. Эривань

Типографія Эмина Теръ—Григоріанъ.